

թիւնը, ի հնումն, այս եկեղեցիին մէջ կը կատարէր Յունուար 5ին Մննդեան ձրագալուցին կամ Խթման գիւերի պաշտամունքը և կ'երգէր «Փառք ի բարձունս» հրեշտակային երգը: Ըստ սաղիմական ծիսարանի, Քրիստոսի Տնօրինական գործերուն տօնակատարութիւնները տեղի կ'ունենային այն տեղերը՝ ուր մեր Տէրը կատարած էր իր Փրկագործութեան խորհուրդը: Այսպէս սահմանեալ հրահանգներու համաձայն, պաշտամունք կը կատարուէր Ս. Յարութեան, Գողգոթայի, Սիոնի, Համբարձման, Գեթսեմանիի, Ղազարիոնի եւ այլ եկեղեցեաց մէջ, ինչպէս ցոյց կու տայ սաղիմական հին ձաշոցը: Ըստ այսմ, Քրիստոսի Մննդեան տօնը Բեթղեհէմի եկեղեցւոյն մէջ կատարուած միջոցին, նոյն տօնը ձրագալուցին կը տօնախմբուէր «Հովնաց» եկեղեցին, զոր շատերը սխալմամբ կը գրեն «Հովանոց»: Մինչև ժ.Բ. դար, մեր ձեռագիր ծիսարանները Ս. Մննդեան ձրագալուցին առթիւ, կը հրահանգեն նոյն օրը երթալ Հովուանոցի եկեղեցին և կատարել օրուան կանոնը: Փարիզի և Օքսֆորդի մատենադարանաց Ը. կամ Թ. դարու ձեռագիր երկու Տօնամակները կը պարզեն մեզի նոյն օրուան արարողութիւնը՝ Հովուանոցի եկեղեցւոյն մէջ: Այդ երկու հնագարեան յիշատակարանները կ'ամբողջացընեն Դ. դարու լատին ուխտաւորուհի էթէրիայի Հովուանոցի եկեղեցւոյ մասին գրած նկարագրութիւնը. վասն զի անոր Օրագրութենէն ինկած է այդ մասը: Նոյն եկեղեցւոյ մասին մէջ կը բերենք հետեւեալ ազգային յիշատակութիւնները, ժամանակագրական կարգաւ: 690ին Գրիգոր քորեպիսկոպոս Արշարունին, «ընթերցուածոց մեկնիչ» մը. կը գրէ. «ժողովին ի հովնացնց յիւներոյ ժամուն եւ այս կսկոն կսսարի. Սղ. ԻԳ. Սղ. ձԼ. Ղուկ. Բ. 8-20, Մատթ. Ա. 18-25, Ծննդ. Ա-Գ, 20, Ես. Է. 10-18, Ելից. ԺԴ. 24-ԺԵ, 22, Միխ. Ե, 1-8, Առկ. Ա. 1-9. Ես. Թ. 5-7. ԺԱ. 1-9, ԼԵ. 4-8, ԽԲ. 1-7, Դան. Դ. 1-90, Տիտ. Բ. 11-15, Սղ. ձԺ. Մատթ. Բ. 1-12: Տաշեանի Ձեռագրաց Յունցակին (թ. 5 և 9) երկու ձաշոցները, մին՝ 1223 կամ 1261, միւսն՝ 1506 թուականաւ, կը հրահանգեն. «Ճրագարացին Յունվարի հինգ ժողովին ի Սուրբ Հովնացնց ի սաւներոյ ժամն, եւ այս կսկոն կս. ՍԴ. Տեղ հովնացի զիս, դարձեալ ՍԴ. ո՛ր հովնաց իսրայելի նայ. Աւեհ. ըս Ղուկասու. Եւ հովիւք . . . » « . . . Յեւ այսորիկ եղանկն ի Հովնացնցին ի Սուրբ Բերդեհեհեհ, եւ ժողովին.